ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, 077001055, nerqintsaghkavan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 52-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի օրակարգը

1. Տավուշի մարզի Ն.Ծաղկավան համայնքի 2019թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2. Տավուշի մարզի Ն.Ծաղկավան համայնքի 2020թվականի տեղական բյուջեի քննարկում և հաստատում:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՍԿԱՆԴԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, 077001055, nerqintsaghkavan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 53-Ն

Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Բյուջեի ծախսային մասի 4251 հոդվածից 116700 ՀՀ դրամ կրճատել և ավելացնել 4241 հոդվածին և 11500 ՀՀ դրամ՝ 4251 հոդվածին, 4111-ից 80000 ՀՀ դրամ ավելացնել 4239 հոդվածին և 4212 հոդվածից 142000 ՀՀ դրամ կրճատել ու ավելացնել 4269 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՍԿԱՆԴԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, 077001055, nerqintsaghkavan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 54-Ն

Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել՝

1. Ն.Ծաղկավան համայնքի 2020թվականի տեղական բյուջեն:

ա/Եկամտային մաս-15391.00 /տասնհինգ միլիոն երեք հարյուր իննսուն մեկ/ ՀՀ դրամ:

բ/Ծախսային մաս-15391.00 /տասնհինգ միլիոն երեք հարյուր իննսուն մեկ/ ՀՀ դրամ:

Հողի հարկ-Բյուջեով *նախատեսված է 1586.2 հազ դրամ, համայնքի վարչական տարածքում գտնվող 320.432 հա գյուղատնտեսական հողատեսքերից գանձվող հարկերից, որի օգտագործողների թիվը կազմում է 201շահառու: Տվյալ տարվա հաշվարկային գումարը կազմում է 1586,2 հազ.դրամ, որը համաձայնեցված է համայնքների միության կողմից տրված հաշվարկին :*

Հողի վարձավճար-
Ներքին Ծաղկավան համայնքն ունի վարձակալության տրված տարածքներ,որոնք համաձայն կնքված պայմանագրերի սահմանվել է:

Համայնքի վարչական տարածքում գտնվող
248,7հա հողի վարձավճար 1298,3հազ դրամ, որից

- Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից 21,9հա՝վարձավճարը 206,0 հազ. դրամ, օգտագործողների թիվը 30 շահառու:

- Պետական սեփականություն
հանդիսացող հողի վարձավճարը կազմում է 1298,3հազ. դրամ:

Տեղական տուրքեր- կազմում է 63,8 հազ դրամ, որից 25,8 հազ. դրամ, համայնքի տարածքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության համար, սահմանվել է համայնքում գործող 4 գործող առևտրի օբյեկտների համար,18 հազ. դրամ, 1 հասարակական սննդի օբյեկտների համար և 20,0 հազ. դրամ 1 խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի համար:

Գույքահարկ- հաշվարկվել է Համայնքների միության կողմից՝ 249 ավտոմեքենաների հարկերից 1377,5 դրամ որից՝

- Գույքահարկ Ա/Ձ քաղաքացիներից - 1252,0հազ-դրամ, որը առաջացել է 241 ավտոմեքենաների հարկերից,
- 249 Ավտոմեքենաներից 6-ի հասցեն անհայտ է՝ գումարը 107,8 հազ. դրամ, 2 ավտոմեքենայի սեփականատերերը մահացած են՝ գումարը 17,7 հազ դրամ:
- Ապառք 250 հազ. դրամ

Ընդամենը հաշվարկված գույքահարկ և ապառք 1502,0 հազար դրամ:

Ծախսային մաս

Հոդված 4111 աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 11650,0 հազար դրամ:

Հոդված 4212 էներգետիկ ծառայություններ 450,0 հազար դրամ:

Հոդված 4214 կապի ծառայություններ 198,0 հազար դրամ:

Հոդված 4215 ապահովագրական ծախսեր 32,0 հազար դրամ:

Հոդված 4221 ներքին գործուղումներ 50,0 հազար դրամ:

Հոդված 4237 ներկայացուցչական ծախսեր 150,0 հազար դրամ:

Հոդված 4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 180,0 հազար դրամ:

Հոդված 4251 շենքերի և կառույցների ընթացիք նորոգում 200,0 հազար դրամ:

Հոդված 4241 մասնագիտական ծառայություններ 200,0 հազար դրամ:

Հոդված 4261 գրասենյակային նյութեր և հագուստ 120,0 հազար դրամ:

Հոդված 4264 տրանսպորտային նյութեր 613,0 հազար դրամ:

Հոդված 4729 այլ նպաստներ բյուջեից 350,0 հազար դրամ:

Հոդված 4819 նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին 216,0 հազար դրամ:

Հոդված 4823 պարտադիր վճարներ 20,0 հազար դրամ:

Հոդված 4234 տեղեկատվական ծառայություններ 20,0 հազար դրամ:

Ընդամենը ծախսեր 15391,0 /տասնհինգ միլիոն երեք հարյուր ինսուն մեկ հազար դրամ/:

2. Հաստատել Ն.Ծաղկավան համայնքի 2020թվականի տեղական բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների /հատված-1 կցվում է/:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման /հատված 2-6 կցվում է/:

4. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունը:

5. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

ա/ գանձապետական հաշվի 2019թվականի տարեվերջյան ազատ մնացորդը ինքնուրույն ներառել 2020թվականի բյուջեի եկամտային մասում և մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար:

բ/ Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

գ/ Սոցիալական օգնություն, խրախուսանք և պարգևատրում հոդվածների գումարների բաշխումը վերապահել համայնքի ղեկավարին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՌԵՎԱԶՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՍԿԱՆԴԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ